

Թիւնը կրում է այդ ակնյայտ գաղափարական պայքարի կնիքը:

Բանաւոր ու գրաւոր (պաշտօնական եւ ժողովրդական) մշակոյթների փոխադրեցութեան հետ է կապուած պատմական երկերի լեզուի ու ոճի խնդիրը: Սովորաբար, ժողովրդական եւ յաճախ չափածոյով շարադրուած ստեղծագործութիւնները հիմնական ատաղձներից մէկն են դարձել պատմական երկերի համար: Ընդ որում, ժողովրդական ստեղծագործութիւնները նաեւ վերաշաղկապուել են արձակով եւ թողել են միջնորդաւորուած ազդեցութիւն՝ պայմանաւորելով պատմութեան շարադրանքի կերպաձեւերի (մոդելների) ընտրութիւնը: Սակայն կարելի է արձանագրել նաեւ հակառակ երեւոյթը: Պաշտօնական կամ էլիտար մշակոյթի դիրքերի թուլացման պայմաններում պատմական երկերը շարադրուել են չափածոյով, եւ այդպիսով ընդլայնուել են յաջորդ սերունդներին՝ բանաւոր ճանապարհով դրանց փոխանցման հնարաւորութիւնները: Համանման միտումների մասին են վկայում նաեւ անցեալի պատմական ժառանգութիւնը չափածոյի վերածելու մասին փաստերը:

Պատմական երկերը հոգեւոր մշակոյթի առաւել պահպանողական շերտերից են, հետեւաբար՝ դրանց լեզուի հարցն առանձնայատուկ կարեւորութիւն ունի: Գեղարուեստական խօսքի արժէք ունեն հիմնականում վաղ միջնադարեան, յատկապէս՝ Ե. դարի՝ դասական գրաբարով շարադրուած պատմական երկերը: Մինչդեռ արդէն Ժ. դարում գրի առնուած աշխատութիւնները շարադրուել են կենդանի խօսքից զգալի տարբերութիւններ ունեցող լեզուով: Յաջորդ դարերի ընթացքում, երբ տարածում է ձեռք բերել միջին հայերէնը, առանձին դէպքերում շատ աւելի նկատելի են դարձել լեզուական տարբերութիւնները: Միջնադարեան պատմաշրջանի աւարտին լեզուական տարբերութիւնները գրե-

թէ անհնար են դարձրել հէնց անմիջական մասնակիցների ձեռքով պատմական անցուդարձերի արձանագրումը: Պատմագրութեան լեզուն շարունակել է մնալ գրաբարը, թէեւ կենդանութիւնը կորցրած այդ լեզուին տիրապետում էին սակաւաթիւ անձինք: Ուստի բաւականաչափ տարածում է ստացել երկու հեղինակների համատեղ ուժերով պատմական երկերի ստեղծումը: Օրինակ՝ Դաւիթ Բեկի եւ Աբրահամ Երեւանցու պատմութիւնները պատմուել են խօսակցական լեզուով, հայրենի բարբառով: Մխիթարեան վարդապետներն իրենց լսածները հարստացրել են նոր փաստերով եւ վերաշարադրել դրանք գրաբարով՝ նորաստեղծ երկերին տալով աւանդական պատմագրութեան համար տիպական գաղափարախօսական ուղղուածութիւն:

Պատմագրութեան պարբերացում առաջարկելիս անհնար է շրջանցել պատմական երկերի ժանրային պատկանելիութեան եւ միջնադարում տարածում գտած ստեղծագործական եղանակների խնդիրները: Միջնադարեան հայ մատենագրութեան մէջ պատմական երկերը ստեղծուել են որոշակի սկզբունքներով, ունեցել են իրենց ժանրային ինքնատիպութիւնը, սակայն ժանրերի յստակ սահմանադատում միշտ չէ, որ գոյութիւն է ունեցել: Իրենք իսկ՝ միջնադարեան հեղինակները փորձել են ճշտորոշել նախորդ պատմիչների եւ իրենց շարադրած աշխատութիւնների ժանրային պատկանելիութիւնը, բայց առկայ բնութագրումները գոյաւոր է անվերապահօրէն ընդունելի համարել. դրանք ինչ-որ չափով պայմանական են: Ժանրային տարբերութիւնները պայմանաւորուած են եղել ոչ միայն հեղինակների հետապնդած նպատակներով, ստացած պատրաստութեամբ, գիտելիքով ու մտահորիզոնով, այլեւ ունեցել են աւելի խորքային պատճառներ: Մասնաւորապէս՝ կարեւորագոյն դեր են կատարել ժամանակի եւ տարածութեան

ընկալումներում տեղի ունեցած փոփոխութիւնները:

Դժուար չէ նկատել, որ «պատմութիւնը», որպէս առանձին ժանր, տիրապետող դերք է ձեռք բերել հայ պատմագրութեան սկզբնաւորման փուլում: Այդ անուանումն է կրում վաղ միջնադարում ստեղծուած պատմական բնոյթի երկերի մեծ մասը: Ժանրային առումով «պատմութիւնը» համակարգուած շարադրանք է, որտեղ գերիշխում են կա՛մ ժամանակագրական, կա՛մ թեմատիկ մօտեցումները: Օրինակելի են համարուել այն պատմական երկերը, որոնք պահպանում են ժամանակագրական խիստ կարգը: Ժամանակագրական կամ թեմատիկ շեղումները դիտուել են որպէս կառուցուածքային թերութիւններ: Պատմութիւնները նաեւ այն տեսակի երկերն են, որոնք հնարաւորութիւն են ընձեռուած բացայայտելու հեղինակի տեսակէտները եւ հանգամանօրէն անդրադառնալու դէպքերի ու երեւոյթների պատճառներին, փոխադարձ կապերին եւ հետեւանքներին: Պատմութիւնների կառուցուածքում առանձնայատուկ տեղ են զբաղեցնում առաջաբանները, որոնք բացայայտում են հեղինակների նպատակները եւ ստեղծագործական սկզբունքները: Հետեւողականօրէն ուշադրութիւն է դարձուել համամասնութիւնների պահպանմանը՝ «չնուազեցուցանել գեղեյալսն եւ կարճակտուր պատմել բանիւք անփութութեամբ»³: Որպէս կանոն՝ պատմիչներն իրենց համեմատել են հմուտ նաւարարի հետ, ով վստահօրէն աւարտին է հասցնելու ձեռնարկած դժուարին աշխատանքը, այսինքն՝ հասցնելու է խաղաղ նաւահանքիստ: Վաղ միջնադարեան պատմիչները յաճախ են մէջբերել նամակներ եւ այլ փաստաթղթեր: Սակայն ամենեւին էլ

պարտադիր չէ, որ դրանք կատարուած լինեն իսկական վաւերագրերի հիման վրա: Օրինակ՝ Մովսէս Խորենացու մէջբերած նամակագրութիւնը Դիոկղետիանոս կայսեր եւ Տրդատ Գ-ի միջեւ գրական ստեղծագործութեան արդիւնք է: Նամակները, ծագործութեան արդիւնք է: Նամակները, ինչպէս օրինակ՝ Սեբէոսի մէջբերած Մօրիկ կայսեր նամակը պարսից արքայ Խոսրով Բ-ին, արտայայտում են ժամանակաշրջանի իրականութիւնը եւ ոգին: Սակայն նի իրականութիւնը եւ ոգին: Սակայն դրանք բառացի վերարտագրութիւններ չեն: Նոյնը կարելի է ասել նաեւ պատմական նշանաւոր դէպքերի արտասանած ճառերի վերաբերեալ:

Աշխարհագրական ընդգրկման տեսանկիւնից «պատմութիւնները» հիմնականում ներկայացնում են Հայաստանի անցեալը՝ հարեւան երկրների պատմութեան առանձին դրուագները ներառումով: Ժեմատիկ հայկական միջավայրում Հետեւաբար՝ հայկական միջավայրում ստեղծուած պատմական աշխատութիւնները գերազանցապէս «Հայոց պատմութիւն»-ներ են:

Ժանրային առումով պատմութեան հետ առաւել սերտ առնչութիւններ ունի ժամանակագրութիւնը: Ժամանակագիրներն ուշադրութիւնը սեւեռել են համեմատաբար փոքր ժամանակահատուածների անցուդարձերի վրայ: Նրանց հիմնական խնդիրը ոչ թէ դէպքերի եւ երեւոյթների բացատրութիւնն է, այլ իրադարձութիւնների կապակցուած արձանագրումը: Ժանրերի կապակցուած արձանագրումները կառուցուածքն աւելի պարզունակ է: Ժամանակագրութիւնները ներքին կառուցուածքն աւելի պարզունակ է: Ժամանակագրութիւնները, անցել է յաջորդ մասին իր գրառումները, անցել է յաջորդ ժամանակահատուածի անցուդարձերի շարադրմանը: Ժամանակագրութիւնները կազմաբանուելու են զլխաւորապէս ռազմաբանուելու եւ զլխաւորապէս ռազմաբանուելու: Համեմատաբար սակաւ ուշադրութիւն է դարձուել բար սակաւ ուշադրութիւն է դարձուել երկրի ներքին կեանքին եւ հոգեւոր մշակութային ոլորտի իրողութիւններին: Ժամանակագրութիւններն աւելի մեծ չափով

³ Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց, Մատենագիրք Հայոց, հտ. Բ, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 2206:

հեղինակները ձգտում էին իրենց նկարագրած հերոսներին օժտել ընդօրնակելի համարուող յատկանիշներով: Նման պարագայում իրականութեան եւ իդէալի համապատասխանութիւնը քիչ էր անհանգստացնում միջնադարեան հեղինակներին: Ստեղծագործողին աւելի շուտ հետաքրքրում էր կերպարը, քան անհատը:

Հարկ է յատուկ նշել պատմական երկերի հանդէս գալու հասարակական միջավայրի, սոցիալական պատուէրի պարզաբանման անհրաժեշտութիւնը: Դարերի ընթացքում փոխուել են պատմիչների սոցիալական պատկանելիութիւնը, ինչպէս նաեւ՝ հասարակութեան այն խմբերը, որոնց հոգեւոր պահանջմունքները բաւարարելու նպատակ են հետապնդել պատմական երկերը: Պատմագրութեան ասպարէզում գերիշխող դիրք գրեթէ միշտ պահանջ է հայ հոգեւորականութիւնը: Հասարակութեան աշխարհիկ շերտերի մասնակցութիւնը նկատելի չի եղել մինչեւ հայ վաճառականութեան մշակութային ակտիւութեան դրսեւորումներն ուղ միջնադարում:

Ուշագրաւ է այն փաստը, որ հայ պատմագրութիւնը թէեւ զարգացել է սրբախօսական գրականութեան եւ յատկապէս՝ վարքագրութեան հետ սերտ առնչութիւնների պայմաններում, այնուամենայնիւ, սկզբից եւեթ ընթացել է իր ուրոյն ուղով: Այս առումով, թերեւս, վճռական դեր են կատարել նախամեսրոպեան հայ պատմագրութեան աւանդոյթները: Հետեւաբար եւ՝ «վարք» բառը ձեռք չի բերել «պատմութիւն» նշանակութիւնը, ինչը տեղի է ունեցել վրաց իրականութեան մէջ²⁸: Այնուա-

մենայնիւ, բացատրութեան կարօտ է այն իրողութիւնը, որ գոնէ վաղ միջնադարում չի ստեղծուել հայոց պատմութեան յատուկ ժողովածոյ եւ այդ այն դէպքում, երբ շարադրուած աշխատութիւնները յաճախ մէկը միւսի շարունակութիւնն էին: Ինչպէս երեւում է Ղազար Փարպեցու Պատմութեան առաջաբանից, պատմական երկերի հաւաքածոյի ստեղծման որաշակի հիմքերը Հայաստանում եղել են: Պատմիչը նշում է, որ Հայոց պատմութեան առաջին գիրքը շարագրել է Ագաթանգեղոսը՝ «այլ բանիբուն գիտութեամբ եւ լի ամենայն հրահանգիւ, ստուգաբան ի կարգադրութիւն ճառից եւ յարմարագիր ի պատմութիւնս ասացուածի իւրոյ»²⁹: Հայոց պատմութեան երկրորդ գրքի հեղինակ Փաւստոս Բուզանդի նկատմամբ Ղազար Փարպեցին քննադատաբար է տրամադրուած, «վասն զի կարգելոցն առ ի նմանէ ի տեղիս ուրեք դիպողք, որպէս առաջնոյն ճշգրտաբանութիւն»³⁰: Այսպիսով՝ թէեւ Փաւստոսն ըստ էութեան շարունակել էր Ագաթանգեղոսի ձեռնարկած աշխատանքները, իսկ Ղազար Փարպեցին էլ ժամանակագրական առումով հայոց պատմութեան շարադրանքը հասցրել էր մինչեւ գրեթէ դարավերջ, այնուամենայնիւ, հայոց պատմութեան ժողովածոյի ստեղծման ճանապարհին մնացել էր մի էական խոչընդոտ: Առկայ երկերը պատմական իրականութեան ընկալման, աշխարհայեացքի ու լեզուաճական տեսանկիւնից միասնական պատկեր չէին ներկայացնում: Համեմատութեան կարգով դարձեալ յիշենք հարեւան վրաստանը, որի պատմութեան միջնադարեան ժողովածոյ՝ «Քարթլիս ցխովրեբան»-ն կազմաւորուել է ազգային պատմագրութեան

²⁸ Ժջվոլո Նոմքորո Նոյն Երեւան, 1935):
²⁹ Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց, էջ 2202:
³⁰ Նոյն տեղում, էջ 2203:

²⁸ Այս առումով յատկանշական կարելի է համարել այն փաստը, որ Ի. Ջաւախիշուիլին հայ պատմական մատենագրութեանը նուիրում իր հետազոտութեան առաջին գիրքն ամբողջութեամբ յատկացրել է վկայաբանութիւնների ու վարքերի հետազոտութեանը (տե՛ս օգ. չճշմանից օգտուելու):

ձեւաւորմանը յաջորդող առաջին իսկ՝ ժի. դարում: Ժողովածոն կազմելիս խմբագիրներն առանձին երկասիրութիւնները հիմնաւոր կերպով վերամշակման են ենթարկել՝ բացառելու համար հակասութիւններն ու կրկնութիւնները: Բացի այդ, միասնական տեքստ ստանալու նպատակով նրանք կրճատել են տարբեր աշխատութիւնների սկզբնական եւ վերջնական հատուածները: Որքան էլ այդ աշխատութիւնները պահպանել են իրենց հեղինակների աշխարհընկալման, ոճի, մտածողութեան կնիքը, այնուամենայնիւ, դրանք ժամանակի ընթացքում ի մի են բերուել եւ այսօր ներկայանում են որպէս ամբողջութիւն: Այդպիսի աշխատանքների իրականացում հայ իրականութեան մէջ տեղի չի ունեցել եւս մէկ պատճառով: Պէտք է նկատի ունենալ այն հանգամանքը, որ «Քարթլիս ցխովրեբան» պաշտօնական պատմագրութեան յուշարձան է եւ բոլոր հարցերի վերաբերեալ արտացոլում է աշխարհիկ եւ հոգեւոր բարձր իշխանութիւնների տեսակէտը: Արշակունիների հարստութեան վերացումը Հայաստանում բացառում էր պատմագրութեան պաշտօնականացումը, իսկ պետութիւն-եկեղեցի փոխարարեցութիւններում էական հակասութիւնների առկայութիւնը Դ. դարում՝ արդէն բարդացրել էր հայոց պատմութեան վերաբերեալ միասնական հայեցակարգի ձեւաւորումը:

Չնայած այս խոչընդոտներին, դատելով բիւզանդական, ասորական ու վրացական մատենագրութեան մէջ պահպանուած տուեալներից՝ վաղ միջնադարում արդէն լիովին կազմաւորուել էր հայ պատմագրական աւանդոյթ, իւրօրինակ «Հայոց պատմութեան ընդհանուր շտեմարան», որը Պրոկոպիոս Կեսարացին կոչում է «Հայոց պատմութիւն» եւ «շարագրութիւն»³¹, Մի-

քայլ Ասորին՝ «Հայոց համառօտ պատմութիւն»³², իսկ Լէոնտի Մրովելին՝ «Երեւոյն Նոմքորո» («Հայոց վարք, պատմութիւն»)³³: Վրացական մի երկում բառապարտէզն աւելում է հետեւեալը. «Ինչպէս մեզ տեղեկացնում է հայոց սովորութիւնների մասին գիրքը, որը կոչւում է «Յճճճճճճճճ» (աւանդագիր), այսինքն՝ «Յճճճճճճճճ» (պատմութիւն)³⁴: Այսպիսով՝ վրացի հեղինակի տեղեկութիւնից պարզ է դառնում, որ վրաց մատենագրական շրջանակներում շրջանառութեան մէջ է եղել

2001, p. 407-410. Ջ. Տրայնա, Փաւստոս «Բիւզանդացի», Պրոկոպիոսը եւ «Հայոց պատմութիւնը» (Jacoby, FGrHist 679, 3-4), «Աշտուանկ» հայագիտական հանդէս, Գ. Նրեւան, 2000, էջ 136-138: Աւելի ուշ ժամանակներում, հայոց պատմութեան վերաբերեալ առանձին, երկաբնակ հայութեան տեսանկիւնից «ճշմարիտ» հայեացքի մշակման անհրաժեշտութիւնը Բիւզանդիայում վերականգնելու նպատակով աշխատեցին Վրացի Վրացիները՝ «Նարատիոն» հայեացքի մանր (տե՛ս Լ. Բարթիկեան, «Narratio de rebus Armeniae», յունարէն թարգմանութեամբ մեզ հասած մի հայ-բաղկեղոնական սկզբնաղբիւր: «Բանբեր Մատենադարանի», թիւ 6, 1962, էջ 457-470. Յ. Ա. Արտյոնով-Փիլանյան, Повествование о делах армянских (VII в.): Источники и время. М., 2004, с. 103-139):
³² Տե՛ս Краткая история Армении, из «Хроники» Михаила Сирийца., «Кавказ и Византия», вып. 1, Ереван, 1979, с. 184-199.
³³ Երեւան, 1979, էջ 184-199.
³⁴ Յայտն է Յայոց յիշատակում «Հայոց յիշատակ»-ում, 2008, 83-83: Յիշատակում «Հայոց պատմութիւնը» կորնի կեկեիձէն նուագում է Մովսէս Սորենացու երկի հետ եւ բազում ուշագրաւ դիտարկումներ է կատարում՝ ցոյց տալով, որ դիտարկումներ է կատարում տեսաբար ինչպէս եւ ազդել հայոց պատմական հայեցակէտերը Լէոնտի Մրովելու պատմական հայեցակարգի վրայ (տե՛ս Յ. Յիշատակում, «Յայոց յիշատակ»-ում, 2008, 83-83: 13-18):
³⁵ «Յայոց յիշատակ»-ում, 2008, 83-83: 13-18):
³⁶ Օ. Յիշատակում, «Յայոց յիշատակ»-ում, 2008, 83-83: 3, 338: Լ. Մելիքեթ-Բեկի Նոյն, 1973, 83-83: 3, 338: Լ. Մելիքեթ-Բեկի կարծիքով՝ թ. դարում վրաստանում ստեղծուել հայոց համառօտ պատմութեան երկու տարբերակ: Առաջինը հիմնուած է եղել հայկական, իսկ երկրորդը՝ հայ-բիւզանդական աղբիւրների վրայ (Լ. Մելիքեթ-Բեկ, Վրաց աղբիւրները Հայաստանի եւ հայերի մասին, հո. Ա., Նրեւան, 1934, էջ 71-86):

³¹ Տե՛ս G. Traina, Faustus of Byzantium, Procopius, and the Armenian History (Jacoby, FGrHist 679, 3-4). - Novum millennium. Studies on Byzantine history and Culture dedicated to Paul Speck,

Հայոց պատմութեան մի իւրօրինակ հաւաքածոյ, որը միանգամայն ինքնատիպ վերնագիր է ունեցել՝ «աւանդագիր»: Չարմանալի փաստ է, որ այդ բառը վկայուած է Հայերէնում եւ, ինչպէս երեւում է, սովորական անուանում չի դիտուել նաեւ վրացերէնում: Այդ է պատճառը, որ վրացի մատենագիրը հարկ է համարել այն բացատրել աւելի ծանօթ «պատմութիւն» բառով:

Սկզբից եւեթ Հայ պատմագրութեան յատկանշական կողմերից է դարձել նրա պաշտօնական բնոյթի գրեթէ լիակատար բացակայութիւնը: Ի տարբերութիւն հարեւան շատ երկրների, որոնց անցեալի լուսաբանումն առաջին հերթին եղել է թագաւորների պատմութեան շարագրումը, Հայ իրականութեան մէջ ամբողջ միջնադարում խորթ է եղել արքունական պատմագրութեան աւանդոյթը: Այս երեւոյթի բացառիկութիւնն աւելի նկատելի կը դառնայ, եթէ վերլուծենք, որ նախամետրոպեան Հայ պատմագրութեան մէջ տիրապետողը եղել են հէնց արքունիքում ստեղծուած երկերը³⁵:

Միջնադարեան Հայ պատմագրութեան առանձնայատկութիւններից է Հայոց եկեղեցու պատմութեանը նուիրուած առանձին պատմական աշխատութիւնների բացակայութիւնը: Նման իրավիճակն առաջին հայեացքից խիստ զարմանալի է թւում, քանի որ Հայ պատմիչների շարքում աշխարհական հեղինակներ հատուկենտ են հանդիպում: Առաւել եւս, որ վաղ միջնադարում յունարէնից Հայերէն թարգմանուած պատմական երկերի շարքը բաղկացած է բացառապէս եկեղեցական պատմիչներից, անկախ այն հանգամանքից, որ նրանց մի մասը հոգեւորական չի եղել: Բաւական է յիշատակել միայն Եւսեբիոս Կեսարացու եւ Սոկրատ Սքոլաստիկոսի ա-

35 Տե՛ս Գ. Մարգարեան, *Նախամետրոպեան շրջանի պատմագրութիւնը*, «Պատմա-քանաքննարկական հանդէս», 1969, թիւ 1, էջ 108-113:

նունները՝ հեղինակներ, որոնք բախտորոշ դեր են կատարել ողջ քրիստոնէական պատմագրութեան ձեւաւորման գործում: Թէեւ Բիւզանդիայում Դ. դարի առաջին քառորդում կազմաւորուած եկեղեցական պատմագրութեան աւանդոյթը պահպանել է իր կենսունակութիւնը մինչեւ Զ. դարի վերջերը³⁶, եկեղեցական պատմութիւններում աշխարհիկ տարրերն աստիճանաբար աւելի մեծ տեղ են սկսել գրաւել: Հայ իրականութեան մէջ սկզբից եւեթ պատմական երկերի գլխաւոր նպատակը եղել է աշխարհիկ, պետական քաղաքական պատմութեան աւանդումը: Դարերի ընթացքում եկեղեցու անցեալը շարագրուել է Հայոց ընդհանրական պատմութեան շրջանակներում³⁷:

Ստեղծուած վիճակը փորձել է շտկել Յովհաննէս Դրասխանակերտցին, որն իր «Հայոց պատմութիւնում» առանձին գլուխ է յատկացրել Հայոց հովուապետերի պատմութեանը, ընդ որում՝ հայոց եկեղեցու ակունքները տեղափոխելով Ա. դար, այսինքն՝ ընդգրկելով նաեւ առաքելական շրջանը³⁸: Նրա կազմած կաթողիկոսական ցանկը յետագայում դրուել է յաջորդ դարերի պատմիչների համանման ցուցակների հիմքում: Տեղական հոգեւոր կենտրոնների պատմութեան շարագրման փորձեր ձեռնարկել են նաեւ Ստեփանոս Օրբէլեանը եւ Զաքարիա Բանաքեոցին, իսկ Լազար Զահեցին ու Սիմէոն Երեւանցին վեր են հանել էջմիածնի Մայր Աթոռի դիրքն

36 Տե՛ս И. Кривушин, *Ранневизантийская церковная историография*, Санкт-Петербург, 1998:

37 Ինչպէս երեւում է, եկեղեցական ու աշխարհիկ պատմութեան միաձուլումը պատմութեան հակակառուցիկ պատճառներով պատմութեան հարձել: Այս առումով խօսում փաստ է Մ. Օրմանեանի հանրայայտ «Ազգապատումի» ենթախորագիրը՝ «Հայ ուղղափառ եկեղեցու անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմութեան»:

38 Տե՛ս Ա. Մարգարեան, *Աշխարհ*, էջ 110-117:

ու միւս կաթողիկոսութիւնների հետ նրա փոխարարբերութիւնների պատմութիւնը:

Ելակէտ ընդունելով առաջ քաշուած սկզբունքները եւ տեսակէտները՝ կարելի է առաջարկել Հայ միջնադարեան պատմագրութեան հետեւեալ պարբերացումը՝ միաժամանակ շեշտելով իւրաքանչիւր փուլի բնութագրական դժբերը:

Միջնադարեան Հայ պատմագրութեան զարգացման ընդհանուր շղթայում որպէս առանձին՝ կազմաւորման փուլ առանձնանում է Ե.-Թ. դարերի ժամանակաշրջանը: Պատմագրութեան հիմքերը դրուել են Ե. դարում, մշակութային եւ մատենագրական ընդհանուր վերելքի շրջանակներում: Յաջորդ դարերի ընթացքում միջնադարեան Հայ պատմագրութիւնը դարձել է Հայկական հոգեւոր մշակոյթի առաջատար եւ առաւել ինքնատիպ բնագաւառը: Հայ դասական պատմագրութեան ձեւաւորման ժամանակաշրջանում Հայաստանում գոյութիւն ունէր բացառիկ արգասաբեր մշակութային միջավայր: Այն կազմաւորուել էր երեք կարեւոր գործոնների ազդեցութեամբ: Առաջինն անտիկ աւանդոյթներն էին, որոնք Հայկական միջավայր էին ներթափանցում գերազանցապէս բիւզանդական ճանապարհով: Մշակութային երկրորդ ծանրակշիռ ներգործութիւնը թողնում էին քրիստոնէական մատենագրութեան յուշարձանները: Պատմագրութեան զարգացման երրորդ կարեւոր նախադրեալը բանաւոր պատմութեան աւանդոյթների, մասնաւորապէս՝ ժողովրդական վէպի առկայութիւնն էր: Վաղ միջնադարում Հայ պատմագրութիւնը մեծապէս հիմնուած էր ժողովրդական մշակոյթի ձեռքբերումների վրայ: Առանձնապէս մեծ էր ժողովրդական առասպելների եւ վէպերի ազդեցութիւնը³⁹: Վաղ միջնա-

դարեան հեղինակները քաջածանօթ էին նաեւ առանձին իշխանական տոհմերի ծագման ու փառաւոր անցեալի վերաբերեալ տոհմային զրոյցներին: Յատկապէս վաղ միջնադարում Հայաստանում լայն տարածում է ունեցել նաեւ իրանական վէպը⁴⁰: Ե. դարի Հայ պատմագրութեան յուշարձանները շարադրուած են դասական գրաբարով: Դրանք միաժամանակ գեղարուեստական արձակի աչքի ընկնող նմուշներ են:

Շարադրուել է մերձաւոր անցեալի պատմութիւնը: Առաջին հերթին սեւեռուն ուշագրութիւն է դարձուել երկրի կեանքում շրջադարձային նշանակութիւն ունեցող «գերիրադարձութիւններին»՝ Հայոց դարձին, Վարդանանց ու Վահանանց պատերազմներին: Այս առումով պատմիչների շարքում միակ բացառուելիորէն ընդլայն խորենացին է, ով նշանակալիորէն ընդլայն խորենացին է, ով նշանակալիորէն ընդլայնացին է Հայոց պատմութեան ժամանակակից դրական սահմանները՝ ստեղծելով Հայոց առաջին ամբողջական պատմութիւնը: Ե.-առաջին ամբողջական Հայ պատմագրութեան ձեռքբերումները ստեղծուել են դարձանքերում միջնադարեան պատմական իրաւաշրջանի նշանաւոր պատմական իրաւաշրջանի նշանաւոր պատմական իրաւաշրջանների ազդեցութեամբ: Դրանք դարձութիւնների ազդեցութեամբ: Դրանք նկատելիորէն զիջում են Հայ դասական պատմագրութեան յուշարձաններին իրենց պատմագրութեան յուշարձանների մակարդակում: Ընդհանուր առմամբ, Ե.-Թ. դր Հայ կով: Ընդհանուր առմամբ, Ե.-Թ. դր Հայ պատմագրութիւնը կարող է բնութագրուել պատմագրութեան փուլ միջնադարեան Հայ որպէս առանձին փուլ միջնադարեան ընդհանուր Հայ պատմագրութեան զարգացման մեծ է եւ նուր շղթայում: Մասնաւորապէս մեծ է եղել Ե. դարի Հայ պատմագրութեան դերը ու նշանակութիւնը: Այդ դարը կարելի է ու նշանակութիւնը: Այդ դարը կարելի է անուանել միջնադարեան Հայ պատմա-

39 *Витие исторической мысли в древней Армении*, Ереван, 1991, с. 7-60, 134-189:
40 Տե՛ս Բ. Չուքասգեան, *Հայ-իրանական գրական անընթացներ* (XVIII դդ.), Երեւան, 1963, էջ 62-111:

39 Տե՛ս Մ. Արեղեան, *Աշխարհ*, հտ. Գ, էջ 50-83, 187-189, 193-215, 441-472. А. А. Степанян, *Раз-*

գրութեան կազմաւորման (ֆորմատիւ) ժամանակաշրջան:

Միջնադարեան Հայ պատմագրութիւնը զարթոնք է ապրում ժ.-ժԳ. դարերում: Այս ժամանակաշրջանի Հայ պատմագրութիւնը բազմաթանր է, աչքի է ընկնում հսկայական ժամանակագրական եւ աշխարհագրական ընդգրկմամբ, ստեղծուած երկերում նկատելի է նաեւ քրիստոնէական պատմագրութեան վերջնական ձեւաւորման իրողութիւնը:

Որպէս սկզբունքօրէն նոր երեւոյթ, կապուած քրիստոնէական գաղափարախօսութեան համամարդկային բնոյթի հետ, ժ. դարի վերջերից, ժԱ. դարի սկզբներից Հայ պատմագրութեան մէջ հանդէս է գալիս համաշխարհային կամ տիեզերական պատմութիւնների շարադրման աւանդոյթը: Քրիստոնէական հայեցակէտերից կարեւոր էր դիտուում ողջ մարդկութեան ճակատագիրը: Ուստի եւ տիեզերական ընդգրկումը դառնում էր քրիստոնէական պատմագրութեան յատկանշական գծերից մէկը:

Տիեզերական պատմութիւնները, որպէս կանոն, չափազանց հակիրճ են ներկայացնում իրադարձութիւնները եւ աշխարհագրական մեծ ընդգրկում ունեն: Այդօրինակ աշխատութեան շարադրման ամենավաղ փորձը ձեռնարկել է Եւսեբիոս Կեսարացին Դ. դարի առաջին քառորդում: Նա առաջինն է, որ փորձել է համաշխարհային պատմութիւնը հակիրճ շարադրել ժամանակագրական զուգահեռ աղիւսակների տեսքով: Պատմագրական այդ աւանդոյթն է ժԲ. դարի 60-ական թուականներին վերականգնացրել Սամուէլ Անեցին, որի ժամանակագրութեան կառուցուածքի առանցքը կազմում են զուգահեռաբար բերուող չորսից վեց ժամանակագրական աղիւսակները⁴¹: Յաջորդ դարերի ընթաց-

քում Հայաստանի տարբեր երկրամասերում հանդէս եկան մի շարք հեղինակներ, որոնք շարունակում էին լրացնել Սամուէլ Անեցու կազմած ժամանակագրական աղիւսակները⁴²:

ժ. դարի 80-ական թուականներին Հայ պատմիչներից Ուխտանէսն իր պատմութեան առաջին հատուածի («Պատմութիւն Հայրապետաց եւ թագաւորաց Հայոց») սկզբում ձգտել է զուգահեռաբար շարադրել Հայոց, պարսից, հռոմէական տիրակալների պատմութիւնը: Պատմութեան երկրորդ մասում («Պատմութիւն բաժանման վրաց ի Հայոց») հեղինակն անդրադարձել է է. դարի սկզբի Հայ-վրացական եկեղեցական բաժանման պատմութեանը: Ուխտանէսի Պատմութեան առաւել արժէքաւոր մասը, որտեղ նա հանդէս է եկել որպէս կատարելապէս ինքնուրոյն հեղինակ, երրորդ մասն է: Մեզ չհասած այդ հատուածում նա շարադրել է «ծաթ» կամ «ծաղ» Հայերի պատմութիւնը, անդրադառնալով նրանց մկրտութեանը, բնակեցրած տարածքի քաղաքներին, գիւղերին, բերդերին ու վանքերին: Այսպիսով՝ պատմագրական նոր միտումը՝ քրիստոնէական աշխարհի համայնապատկերը ներկայացնելու հակումը, Ուխտանէսն իր աշխատութեան յաջորդ երկու հատուածներում չի զարգացրել: Առաջին «տիեզերական պատմութիւն»-ը ժԱ. դարի սկզբներին շարադրել է Ստեփանոս Տարօնցի Ասողիկը: Համաշխարհային պատմութեան ստեղծման փորձ է ժԲ. դարի վերջում Անիում շարադրուած Մխիթար Անեցու «Մատեան աշխարհավէպ հանդիսարանաց» աշխատութիւնը: ժԳ. դարի երկրորդ կէսին Վարդան Արեւելցին շարադրել է վերջին տիեզերական պատմու-

րը կազմեց Ա. Հայրապետեանը, առաջաբանը՝ Կ. Մաթեոսեանի, Երեւան, 2011, էջ 5-17:
42 Կ. Մաթեոսեան, Սամուէլ Անեցու ժամանակագրութեան ձեռագրերը եւ նորայայտ լրացումները, Երեւան, 2009:

41 Սամուէլ Անեցի, Հասարմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ, բնագի-

թիւնը հայ իրականութեան մէջ: Ըստ էութեան, տիեզերական պատմութիւն է նաեւ 1289 թուականին աւարտուած Մխիթար Այրիվանեցու աշխատութիւնը, որը ձեւի եւ ժանրային պատկանելիութեան առումով ժամանակագրութիւն է: Այստեղ եւս գլխաւոր ուշադրութիւնը յատկացուած է վաղնջագոյն պատմութեանը: Փոքրածաւալ աշխատութիւնում աւելի մեծ տեղ են զբաղեցնում աշխարհի արարչութիւնից մինչեւ Ադամ, այնուհետեւ Ադամից մինչեւ Յիսուս Քրիստոս ընկած երկու դարաշրջանները, քան 1 թուականից մինչեւ 1289 թուականը տեղի ունեցած բոլոր անցուդարձերը: ժԲ.-ժԳ. դարերի Հայ հեղինակներն աստուածաշնչեան, այսպէս կոչուած, «սրբազան պատմութիւնը» ներկայացնելու աւելի մեծ հնարաւորութիւններ են ունեցել, քան Ստեփանոս Տարօնցին, որը կարող էր թուագրման հիմքում դնել միայն մէկ յուսալի ժամանակագրական առանցք՝ Հայոց մեծ թուականը: Նա փորձել է ժամանակագրական ցուցումներով օժտել շուրջ չորս դար ընդգրկող ժամանակաշրջանը: Մինչդեռ Սամուէլ Անեցին եւ նրա յաջորդները փրկչական թուականին դիմելու շնորհիւ ժամանակագրական բացարձակ սանդղակը նախ հասցրել են մինչեւ 1 թուական, ապա արարչագործութեան եօթանասնից թուականի(5198) օգնութեամբ ներկայացրել են շուրջ վեց հազարամեակի պատմութիւն⁴³:

Համաշխարհային պատմութիւնը լրացնելու եւ վերաշարադրելու գործին նպաստում էին այլ լեզուներով շարադրուած պատմական երկերի թարգմանութիւնները: ժԲ. դարում իրականացուած է Վրաստանի պատմութեան միջնադարեան ձեռնարկի՝ «Քարթլիս Յիսովրեբայի» հայերէն թարգմանութիւնը, սակայն հայկական

պատմագրական աւանդոյթի ակնյայտ ազդեցութեամբ⁴⁴: Յաջորդ հարիւրամեակում Վարդան Արեւելցին խմբագրում է ասորի նշանաւոր հոգեւոր գործիչ եւ պատմիչ Մխիթայէ Ասորու ժամանակագրութեան հայերէն թարգմանութիւնը: Տիեզերական հայերէն թարգմանութիւնը: Տիեզերական պատմութիւնների շարադրման օժանդակում են ոչ միայն օտար մատենագրութիւններից կատարուած թարգմանութիւնները, հսկայական դեր է կատարում նաեւ ներքին, հսկայական դեր է կատարում նաեւ համապատասխան միջավայրը: Միջնադարեան քաղաքներում առաւել նպաստաւոր պայմաններ էին առաջացել մշակութային փոխադարձ շփումների համար, աճում էր հետաքրքրութիւնը մերձաւոր ու հեռաւոր հեղինակների պատմութեան նկատմամբ: Այս երկրների պատմութեան կարելի է համաառումով յատկանշական կարելի է համարել Մխիթար Անեցու օրինակը, որը պատմիչի համար պարտադիր է համարել լեզուների իմացութիւնը եւ օգտուել է ֆարթլիսների իմացութիւնը եւ օգտուել է ֆարթլիսներից հէնց բնագրի լեզուով, ինչպիսիք է Հայոց մեծ թուականը: Նա փորձել է ժամանակագրական ցուցումներով օժտել շուրջ չորս դար ընդգրկող ժամանակաշրջանը: Մինչդեռ Սամուէլ Անեցին եւ նրա յաջորդները փրկչական թուականին դիմելու շնորհիւ ժամանակագրական բացարձակ սանդղակը նախ հասցրել են մինչեւ 1 թուական, ապա արարչագործութեան եօթանասնից թուականի(5198) օգնութեամբ ներկայացրել են շուրջ վեց հազարամեակի պատմութիւն⁴³:

Յաջորդ դարերի ընթացքում, պատմագրութեան անկման պայմաններում, տիեզերական պատմութեան շարադրման փորձերն այնուամենայնիւ շարունակուել են: Զանքեր են գործադրուել ստեղծելու նախորդ դարերի ընթացքում գրի առնուած պատմական աշխատութիւնների համառօտ տարբերակներ: Մանր ժամանակագրութիւնների ժանրի տիրապետութեան

44 Քարթլիս ցիսովրեբայի կամ վրաց պատմութեան հին հայերէն թարգմանութիւնը, վրացերէն բնագիրը եւ հին հայերէն թարգմանութիւնը ուսումնասիրութեամբ եւ բաղադրով լոյս ընծայեց Ի. Արուստեան, Թբիլիսի, 1953, Rewriting Caucasian History. The Medieval Armenian Adaptation of the Georgian Chronicles, Translated with Introduction and Commentary by R. W. Thomson, Oxford University Press, 1996.

43 Ա. Տէր-Ղեւոնդեան, Թուսկանութեամբ ժամանակագրութիւնը հայ պատմագրութեան մէջ, էջ 43:

լուսաբանելով շուրջ վեց տասնամեակի պատմական իրադարձություններ: Անկման շրջանի հայ պատմագրություն մէջ հանդէս են գալիս նոր միտումներ, որոնք հասարակութեան կեանքում կատարուած խոր տեղաշարժերի իւրօրինակ արձագանքն էին: Աստիճանաբար փոխուել էր հասարակութեան ճաշակը, Հայաստանում տիրող անապահով վիճակի պայմաններում խիստ դժուարացել էր կրթական կենտրոնների գործունէութիւնը, նուազել էին գրաւոր խօսքի ընկալման հնարաւորութիւնները: Նախորդ դարաշրջանների համար բնութագրական էր այն իրադրութիւնը, երբ պատմիչները չափածոյ երկերի հիման վրայ շարադրում էին արձակ պատմական աշխատութիւններ: ԺԴ.-ԺԶ. դարերում դիտուում է հակառակ պատկերը: Հեղինակները ձգտում են ստեղծագործել չափածոյով, որը հասարակ ժողովրդի համար աւելի դիւրընկալելի էր: Որոշակի դեր էր կատարում այն հանգամանքը, որ ժողովրդական մշակոյթի համար բնութագրական էր պատմական իրադարձութիւնները չափածոյ արձանագրելը եւ բանաւոր ճանապարհով սերնդից սերունդ փոխանցելը: Նոյնիսկ վերամշակման են ենթարկուել նախորդ դարերի հանրածանօթ պատմական երկերը եւ պատմական բնոյթ կրող ստեղծագործութիւնները: Չափածոյով վերաշարադրում են նաեւ առաւել տարածուած եւ հասարակութեանը յուզող պատմական սիւժէները:

Շարադրում են բազմաթիւ պատմական ողբեր, որոնց բնութագրական կողմն է անցեալի իդէալականացումը, նախորդ ժամանակաշրջանների նշանաւոր դէմքերի վկայակոչութեան միջոցով ներկայ կացութեան ողբերգականութեան ընդգծումը⁵⁰: Չափածոյ պատմական ստեղծագործութիւնները՝ որպէս սկզբնաղբիւրների, ար-

50 Պ. Խաչատրեան, Հայ միջնադարեան պատմական ողբեր (ԺԴ.-ԺԷ. դդ.), Երեւան, 1969:

ժէքը բարձր չէ, սակայն այդ ստեղծագործութիւններն ուշագրաւ են որպէս դարաշրջանի տրամադրութիւնների արտայայտութիւն: Կրթութեան եւ գիտական մտքի համընդհանուր անկման պայմաններում չափածոյ պատմական ստեղծագործութիւններն օգնում էին պահպանել հետաքրքրութիւնն անցեալի նկատմամբ եւ ունէին դաստիարակչական մեծ նշանակութիւն: Նոյն նպատակին էին ծառայում վարքագրական եւ վկայաբանական յուշարձանները, որոնք քրիստոնէական հաւատի պաշտպանութեան կոչելով նպատում էին ազգային ինքնագիտակցութեան խորացմանը եւ միասնականութեան զգացմունքի ամրապնդմանը:

Հայ միջնադարեան պատմագրութեան վերջին՝ ժէ.-ժԸ. դարերի փուլում, որը կարելի է բնութագրել որպէս նոր վերելքի ժամանակաշրջան, հայ հասարակութեան մէջ տնտեսական եւ մշակութային բարձունքները վստահօրէն գրաւել էր ձեռներէց, վճռական եւ մտաւոր զարգացման համեմատաբար բարձր մակարդակ ունեցող վաճառականութիւնը: Այդ նոր հասարակական խաւը, որի կենտրոնը Նոր Զուղան էր, գրեթէ համաշխարհային ծաւալներ ունեցող առեւտրական գործունէութիւն էր ծաւալել: Գրաւելով բոլոր կարեւոր դիրքերը՝ հայ վաճառականութիւնն իր կամքն էր թելադրում հոգեւորականութեանը եւ նոր սաղմնաւորող հայ մտաւորականութեանը: Հայ վաճառականութիւնը սկսել էր հետզհետէ ուժգնացող դեր եւ նշանակութիւն ձեռք բերել նոյնիսկ մտաւոր կեանքում:

Հանդէս են գալիս մի շարք գրող, թարգմանիչ ու մեկնեաա վաճառականներ, եւ հոգեւորականութիւնը կորցնում է մշակութային կեանքում մինչ այդ ունեցած

մենաշնորհային դիրքը⁵¹: Վաճառականներն իրենց հետ գրականութիւն են բերում նոր աշխարհընկալում: Նրանք յաճախ գրի են առնում իրենց հետ կատարուած անցուղարձերը եւ սեփական մտքերն ու ապրումները ժամանակի խօսակցական, պարզ եւ անմիջական լեզուով: Վաճառականների միջավայրում է, որ հանդէս են գալիս տարածութեան եւ ժամանակի նոր ընկալումները: Վաճառական հեղինակների գրաւումներն աչքի են ընկնում իրենց ժամանակագրական ճշգրտութեամբ: Հայ վաճառականները, շրջելով աշխարհի գրեթէ բոլոր երկրներում, յեղաշրջում են մտցնում նաեւ տարածութեան մասին աւանդական պատկերացումներում:

Հարեւան եւ հեռուոր երկրների հայկական գաղթավայրերը՝ իրենց ներքին կառույցներով, շրջակայ բնակչութեան եւ հայրենիքի հետ ուրոյն փոխյարաբերութիւններով, դարձեալ նպաստում էին նոր հայեացքների եւ մտածելակերպի տարածմանը: Գաղթավայրերի ընդարձակման ու ամրապնդման արդիւնքներից էր հետաքրքրութեան արթնացումն այն երկրների անցեալի նկատմամբ, որտեղ ստեղծուել էին ստուարաթիւ եւ ազդեցիկ հայկական համայնքներ: Պատահական չէ, որ պատմական աշխատութիւններ են շարադրում Իրանի եւ Հնդկաստանի, այսինքն՝ այն երկրների պատմութեան վերաբերեալ, որոնց տնտեսական կեանքում յատկապէս նկատելի դեր էր ձեռք բերել հայ բնակչութիւնը: Ազգային կեանքում գաղթավայրերի հանդէս գալու հետ ուժեղանում են դաւանափոխութեան երեւոյթները, մասնաւորապէս՝ պայքար է ծաւալուում հայերին կաթոլիկ եկեղեցու հետ կապելու ուղղութեամբ: Որոշ հեղինակներ, լաւ տիրապետելով հայերէնին, շարադրում են հայոց պատմութիւնը

կաթոլիկ եկեղեցու տեսանկիւնից: Հայ պատմագրութեան մէջ տարածուած թեմա է դառնում դաւանաբանական բանավէճերի պատմութեան շարադրումը: Հետեւաբար եւ պահանջ է առաջանում գրի առնելու հայոց եկեղեցու դաւանաբանութիւնը, ազգային եկեղեցու ներսում փոխյարաբերութիւնների պատմութիւնը:

Հայ պատմագրութեան վերելքը նախապատրաստուեց նաեւ հոգեւոր կեանքում կատարուած խոշոր տեղաշարժերով: Հայ հոգեւորականութեան դարաւոր թմբիլը եւ մտաւոր խաւարի տիրապետութիւնը Հայ վաճառականութեան միջավայրում՝ առաջ են բերել «անապատական» հզոր շարժում են բերել «անապատական» հզոր շարժում է ժուժը: Հետզհետէ ուժգնացող ձգտում է նկատուում ծանօթանալու անցեալի մատենագրական ժառանգութեանը, տեղեակ նագրական ժառանգութեանը եւ նադառնալու հայոց պատմութեանը եւ նախորդ դարերում ստեղծուած հոգեւոր արխիւները: Այս դարաշրջանի նշանաւոր ժէքներին: Այս դարաշրջանը ընդօրինակութեան հոգածութեամբ ընդօրինակուել են հայ պատմիչների երկերի հանրայայտ ժողովածոներ, կաղմուել են հայ պատմիչների ցանկեր⁵²:

Ժէ.-ժԸ. դարերում մտաւոր առաջընթացն արագացաւ, մտաւոր կեանքի հորի-թացն արագացաւ, մտաւոր կեանքի հորի-թոններն ընդլայնուեցին հայ տպագրութեան յաջողութիւնների շնորհիւ: 1669 թեան յաջողութիւնների շնորհիւ Դաւրի-թուականին լոյս տեսաւ Առաքել Դաւրի-թեցու «Պատմութիւնը», իսկ 1695 թուականին հրատարակուեց Մովսէս Խորենաւցու «Հայոց պատմութիւնը»: Պատմական աշխատութիւնների հրատարակութեանը յաջողութիւնների էր դարձուել ամբողջ մեծ ուշագրութիւն էր դարձուել ամբողջ ժԸ. դարի ընթացքում:

Ժէ.-ժԸ. դարերում նոյնիսկ աւանդական պատմագրութիւնը զարգացման հասական միտումներ է ցուցաբերել: Ստեղծուել են պատմական երկեր, որոնց հեղինակները հոգեւորականներ են կամ

51 Տե՛ս Լեո, Հայոց պատմութիւն, հտ. III, գ. II, «Երկերի ժողովածոյ», հտ. 3, Երեւան, 1973, էջ 523-549:

52 Զ. Աճախեան, Հայկական մատենագիտութիւն, հտ. Ա, Երեւան, 1959, էջ XLIII-XLVIII, LI-LV:

Հոգեւոր կրթութիւն ստացած անձինք: Այսպիսով՝ նրանք ստացել են որոշակի տեսական-մատենագրական պատրաստութիւն եւ հիմնուել են նախորդ դարերի պատմագրութեան փորձի ու նուաճումների վրայ: Առաքել Դաւրիթեցին (ԺԶ. դարի վերջին տասնամեակ - 1670) Հայ պատմագրութեան նոր վերելքի ժամանակաշրջանի առաւել խոշոր հեղինակն է, որի Պատմութիւնն աչքի է ընկնում թեմատիկ եւ աշխարհագրական ընդարձակ ընդգրկումով: Թէեւ աշխատութեան առանցքը կազմում են քաղաքական անցուղարձերը, մասնաւորապէս՝ թուրք-իրանական պատերազմների պատմութիւնը եւ Շահ Աբասի կազմակերպած բռնագաղթը, հեղինակն անդրադառնում է նաեւ տնտեսութեան հարցերին եւ դրուատանքով է խօսում Հայ վաճառականութեան այն հատուածի մասին, որը համագործակցում էր առաջադիմական հոգեւորականութեան հետ: Նոր երեւոյթ են Հայկական գաղթավայրերի մասին հանգամանալից վկայութիւնները: Հայկական համայնքների կեանքին ապագայ պատմագիրը մօտիկից ծանօթացել էր իր բազմաթիւ ճանապարհորդութիւններին ընթացքում:

Զաքարիա Քանաքեռցին (1627-1699) աւանդել է պատմական անցուղարձերը՝ հիմնուելով ժողովրդական ընկալումներն արտացոլող բանաւոր զրոյցների վրայ: Հեղինակը գրի է առել Շահ-Աբասի մասին պատմուող բոլոր զրոյցները, անկախ դրանց «թէ սուտ եւ թէ առասպել, եւ թէ ճշմարիտ եւ թէ յիրաւ» լինելուց: Հեղինակը յստակօրէն գիտակցել է, որ հաղորդած նիւթերը զգալիօրէն աղաւաղում են պատմական իրականութիւնը եւ անգամ խորհուրդ է տուել ընթերցողներին Շահ-Աբասի մասին ստոյգ տեղեկութիւններ ստանալու համար դիմել Առաքել Դաւրիթեցու Պատմութեանը: Բանահիւսական նիւթերին գերազասութիւն տալու տեսանկիւնից Զաքարիա Քանաքեռցին շարունակել է Փաւստոս

Բուզանդի, Յովհան Մամիկոնեանի եւ Անանուն Զրուցագրի (Կեղծ Շապուհ Բագրատունու) աւանդոյթները:

Արեւմտահայ իրականութեան մէջ պատմագրութեան նոր վերելքի սկզբնաւորողը եղաւ Գրիգոր Դարանաղցին (1576-1643), որը ստանձնեց ԺԷ. դարի առաջին տասնամեակների պատմութիւնը շարադրելու խնդիրը՝ ուշադրութեան կենտրոնում պահելով Օսմանեան Թուրքիայում եւ Արեւմտեան Հայաստանում ծաւալուած անցուղարձերը: Դարանաղցու ժամանակագրութեան՝ ԺԷ. դարի 30-40-ական թուականների դէպքերի մասին շարադրանքը ոչ միայն հանգամանալից է, այլեւ աչքի է ընկնում հեղինակային գնահատականներով, երբեմն նաեւ՝ կողմնապահ վերաբերմունքով: Գրիգոր Դարանաղցին պատկանում է այն հեղինակներին, որոնք ժամանակաշրջանի անցուղարձերին անդրադառնալիս գերազանցապէս առաջնորդուել են սեփական, խիստ անձնական սպաւորութիւններով ու գնահատականներով: Քաղաքական ու հոգեւոր-մշակութային դէպքերի նկարագրութեանը նա միահիւսել է իր անձնական կեանքի տարեգրութիւնը:

Արեւմտեան Հայաստանի եւ Կ. Պոլսի պատմութիւնն ու իրականութիւնն իրենց արտացոլումն են գտել նաեւ Երեմիա Չեւեպի Քեօմուրճեանի (1637-1695) հսկայածաւալ գրական ու գիտական ժառանգութեան մէջ: Լինելով իր դարաշրջանի ամենակրթուած մտաւորականներից մէկը՝ նա շփուել է Հայ եւ օտար հոգեւոր ու աշխարհիկ ազդեցիկ շրջանների հետ, անձնական կապեր է պահպանել նաեւ թուրք մտաւորականութեան նշանաւոր դէմքերի հետ: Նա հմուտ է՝ եղել արեւելեան եւ արեւմտեան բազմաթիւ լեզուներում, հեղինակել է պատմական, աշխարհագրական, քարտեզագրական բնոյթի մի շարք աշխատութիւններ: Երեմիա Քեօմուրճեանը գործել է մշակութային, այդ թւում նաեւ

պատմագրական, շփումների համար չափազանց նպաստաւոր միջավայրում: Նա բազմաթիւ թարգմանութիւններ է կատարել յունարէնից ու լատինարէնից հայերէն եւ հայերէնից թուրքերէն: Առաւել կարեւոր է այն փաստը, որ Քեօմուրճեանը թուրքերէն է թարգմանել իր շարադրած «Հայոց պատմութիւնը», որի հայերէն բնագիրը չի պահպանուել: Այդ թարգմանութիւնը կատարուել է թուրք պատմագիրների խնդրանքով եւ պատկերել է Հայոց պատմութեան ամենափառաւոր ժամանակաշրջանները: Քեօմուրճեանի աշխատութիւնն աղբիւր է ծառայել Թուրքիայում աշխատող արաբ պատմագիր Մուհամմադ Բաշիի համար (մահացել է 1702 թ.) «Ձամի ադ-դուլալ» («Տիեզերական պատմութիւն») հսկայածաւալ երկը շարադրելիս⁵³:

ԺԸ. դարի առաջին տասնամեակների Հայ հեղինակներն իրենց ուշադրութիւնը հիմնականում սեւեռել են նախորդ տասնամեակներին եւ ժամանակակից դէպքերին (Եսայի Հասան-Ջալալեան, Ստեփանոս Շահումեան, Պետրոս դի Սարգիս Գիլանեցի, Աբրահամ Երեւանցի): Սակայն ԺԸ. դարում Հայկական միջավայրում վերակենդանացել են այն պատկերացումները, որոնց համաձայն պատմիչը գլխաւորապէս հեռաւոր անցեալի հետազօտող է: Այս նոր ընկալման արտայայտութիւններից կարելի է համարել Հայոց ամբողջական պատմութիւն շարադրելու դեռեւս վեհերոտ փորձերի ձեռնարկումը, օրինակ՝ Յակոբ Նալբանդի⁵⁴ կողմից:

ԺԷ-ԺԸ. դարերի Հայ պատմագրութեան մէջ նոր աշխարհընկալման արտայայտութիւններից են դառնում յուշագրա-

կան, օրագրական, ուղեգրական բնոյթի աշխատութիւնները, որոնք պատմական անցուղարձերն արտացոլել են հեղինակների անձնական սպաւորութիւնների եւ պարունակների միջոցով: Ուղեգրական առաջին գրառումները թէեւ աւելի վաղ են սկսել շարագրուել, սակայն ժողովրդականութիւն են ձեռք բերել ուշ միջնադարում: Դրանք աչքի են ընկնում իրենց բազմազան բովանդակութեամբ, այցելած երկրների աւելի հանգամանալից նկարագրութիւններով: Մասնաւորապէս՝ ընդհանուր շարագրանքի մէջ յայտնուել են հեղինակների անձնական կեանքի, ընտանեկան մագործների, տնտեսական պայմանների մասին տարաբնոյթ եւ հարուստ տեղեկութիւններ:

Համանման զարգացում են ապրել օրագրական բնոյթի գրառումները: Հայ վաճառականները սովորաբար ունեցել են իրենց գրառումների մատեանները, որտեղ շարագրում էին կատարուած գործարքները, հեղինակների համար յիշարժան դէպքերը: Այսպիսով՝ ստացուած էր իւրօրինակ ատեւտրական հաշուետուութիւն՝ զուգակցուած ընտանեկան տարեգրութեան հետ: Այս առումով աչքի ընկնող երկերից է Զաքարիա Ագուլեցու (1630-1691) Օրագրութիւնը: Բացի տնտեսական բնոյթի տեղեկութիւններ հաղորդելուց, նա շարագրել է կութիւններ հաղորդական, կենցառանաւ անձնական, ազգագրական, կենցաղային բովանդակութիւն ունեցող բազմաթիւ նկարագրութիւններ: Յատուկ ուշադրութեան են արժանի նրա մտորումները կեանքի իմաստի, հարստութեան նշանակութեան եւ այլ հարցերի վերաբերեալ: Զաքարիա Ագուլեցու Օրագրութեան հիմնական կարելի է պատկերացում կազմել ոչ միայն ժամանակի Հայ վաճառականու-թեան դրութեան, այլեւ նրա մտածելակերպի եւ հոգեբանութեան վերաբերեալ: Ընդարձակ օրագրութիւններ են շարագրել հասարակական այլ խաւերի ներկայացուցիչները, մասնաւորապէս՝ Երեմիա Չեւեպի

⁵³ Տե՛ս Ա. Տէր-Ղեւոնդեան, Երեմիա Չեւեպի մասին պատմագրական հարցեր, Էջ 9-10, «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1960, թիւ 7-8, էջ 143-151:
⁵⁴ Տե՛ս Լեո, Աշխ., էջ 456-457:

Քեօմուրճեանը եւ նշանաւոր հոգեւորական Մինաս Համթեցին:

ԺԸ. դարի առաջին տասնամեակների ընթացքում իրադարձութիւններն աւանդելու պատկերաւոր ոճը, իրադարձութիւնները հանգամանօրէն, երբեմն նոյնիսկ կենցաղային մանրամասներով հաղորդելու ձգտումը, ընթերցողների հետ հաղորդակցուելու անմիջականութիւնը հանդէս են գալիս նոյնիսկ աւանդական պատմագրու-

թեան մէջ: Ժամանակի հայոց կաթողիկոս Աբրահամ Կրեատացին շարադրել է Պատմութիւն, որը, սակայն, ժանրային առումով աւելի շուտ ապաւորութիւնների անմիջական արձանագրում է՝ յիշատակարան-յուշագրութիւն:

Պատմագրութեան մէջ դիտուող հեռանկարային միտումներին էլ վիճակուած էր վճռորոշ դեր կատարել նոր ժամանակներում:

ЛЕВ-АГНЕЦ СРЕДИ ТИПИЧЕСКИХ ОБРАЗОВ МОНЕТ И ПЕЧАТЕЙ ЛЕВОНА II(I)

Самвел Григорян

Левону Григоряну, льву и потомку львов,
с глубокой признательностью посвящается

Иконографию монет и печатей Левона I Рубеняна (1187/1198-1219), сына Стефана, отличает разнообразие изображений львов. Все они относятся к королевскому периоду его правления¹. Этот властитель Киликии, Исаврии и части Памфилии короновался 6 января 1198 г.² Тагавором, то есть, королём Армении/Армянским/всех армян³, основав тем самым на перечисленных землях Армянское королевство⁴. На сохранившихся же медных моне-

тах Левона докоролевского периода (1187-6 января 1198) львиные изображения и мотивы отсутствуют.

На их лицевой стороне представлен иной образ – скачущий влево⁵ всадник в рыцарском вооружении, на обратной же запечатлён равносторонний крест⁶, у завершения которого изображены полые кружки, а в квадрантах – знаки полумесяца. Легенда аверса – «Левон слуга Господа» (ԼԵՒՈՆ ՄԱՌԱ ԱՅ), реверса – «сын Стефана» (ՈՐԴԻ ԱՏԵՖԱՆԷԻ). Качество исполнения и сохранности этих монет не позволяет сделать однозначный вывод, имеется ли у всадника щит – из доспехов различим только шлем. Невидимой правой рукой он удерживает древко – вероятно, копьё – с вексиллоидом, на рисунке которого заметны три длинные, узкие полосы (ленты, «хвосты», косы), отходящие то ли от древка, то ли от прикреплённого к древку прямоугольного по-

¹ Y. T. Necessian. *Armenian coins and their values*. Los Angeles, 1995, p. 108-122, plates 18-24 (253-278, 282-313); G. Schlumberger. *Bulles d'or et sceau des rois Léon II(I) et Léon VI(V) d'Arménie*. Paris, 1893, p. 1-2.

² Относительно года коронации Левона I существуют различные мнения. Ряд исследователей полагают, что она имела место 6 янв. 1199 г. Мы не разделяем их точку зрения и поддерживаем развёрнутый комментарий на данную тему Л. Тервёрянна. – см.: Л. Տէր-Պետրոսեան. *Խաչապիտակը եւ հալեղը*, հտ. Ա, Երևան, 2005, էջ 399, ծ. ա.

³ Варианты формулировки королевского титула Левона I приведены по легендам монет и печатей, на которые мы неоднократно ссылаемся в настоящей статье, а также по его грамотам и корреспонденции. – см.: V. Langlois. *Le trésor des chartes d'Arménie ou cartulaire de la chancellerie royale des Roupéniens*. Venise, 1863, p. 105-126.

⁴ Սմբատ Սպարապետ. *Տարեգրք*, աշխատասիրութեամբ Ս. Ազըլեանի, Վենետիկ, 1956, URL <http://www.digilib.am/digilib/?menu=&wrk=285&wrpg=0&aurp=0> (25.10.2012), թիվ 647; Le *con-nétable Sempad. Chronique du royaume de la Petite Arménie*. – In: *Recueil des historiens des Croisades, Documents arméniens*, t. I (далее RHC DA I), Paris, 1869, p. 634. В работе над настоящей статьёй мы в основном используем издание

манускрипта, хранящегося в матенадаране Конгрегации мхитаристов на о. Св. Лазаря в Венецианской лагуне, поскольку он более ранний – см.: Л. Բարսեղեան. *Սմբատ Սպարապետը եւ «Տարեգրքի» հեղինակի հարցը*. – Պատմա-աշխարհային հանդես (далее ՊԲՀ), Երևան, 1976, № 1, էջ 244. На эчмиадзинский список Лепетоси Смбага Гундстабля (изданный в Париже) мы ссылаемся только по мере необходимости.

⁵ Поскольку мы не рассматриваем данное изображение как геральдическое, стороны здесь определены обычным образом.

⁶ Некоторые завершения креста этих монет более характерны для так называемого лапчатого (широкого на концах) типа креста, другие – для ко-стыльного.